

# Ապրիլեան Ոգեկոչում

24 Ապրիլ 2006  
Երուսաղէմ

Նման նախնացեալ տարիներուն այս տարի նաեւ Ապրիլեան Ոգեկոչման Միացեալ Յանձնախումբը ներկայանող Սաղիմահայ բոլոր միութիւնները թէ Պատրիարքութիւնը, Մարտ ամսուայ ընթացքին վերակազմելով իր դիւանը անցաւ աշխատանքի:

Սավորական բոլոր աշխատանքներու թէ սկսբունքային ծրագրերու մշակումէ ետք, ինչպիսիս Ապրիլ 24ի օրուայ հոգեհանստեան պաշտօն-մայրավանքէ մինչեւ Արարայի յուշարձան երթ - յուշահանդէս եւայլն:

Յանձնախումբս, նման տարիներու սովորութեան, բարձրացաւ Պատրիարքարան արժանանալու Պատրիարք Յօր օրհնութեան թէ Ս. Աթոռի պաշտօնական գործակցութեան:

Բայց եւ այնպէս, հակառակ մեր լաւագոյն տրամադրութեանց, Սրբազանի հետ Յանձնախումբի տեսակցութիւնը աւարտեցաւ պարզապէս յանձնախումբի հաւանական պարակտումով նկատի առնելով որ Սրբազանը մերժեց Ապրիլ 24ի օրը հոգեհանգստեան պաշտօն կատարել, որովհետեւ այդ օրը կը զուգահիւսէր Չատկուայ Բ. օրուան Պատրիարքական Պատարագի մատուցման, ինչ որի վրայ հոգեհանգիստ, թափօր ու երթ պիտի ստեղծեր աւելորդ ֆիզիքական ծանրութիւն յատկապէս կղերական դասու վրայ ինչ որու պատճառաւ Սրբազանը կտրուկ կերպով մերժեց Ապրիլ 24ի հոգեհանստ կատարել:

Սրբազանը, նաեւ յիշեց այն թէ այդ նոյն պահին շրջանս գտնուելու են Թուրքահայ ուխտաւորներ Սեսրոպ Պատրիարքի գլխաւորութեամբ եւ այդ ուխտաւորները կարող էին հասկնալի պատճառներով նեղ կացութեան մատնուիլ մեր ոգեկոչման ձեռնարկներու պատահական ներկայութեամբ:

Յանձնախումբի կողմէ, յատկապէս Յ.Ս.Ը.Մ.ի ներկայացուցիչի, բոլոր մօտեցումները թէ խնդրանքները միջին եզր մը գտնելու, անպայման Ապրիլ 24ը իր օրին նշելու, մնացին անարձագանգ, մինչ Յ.Ս.Ը.Մ.ի ներկայացուցիչները, հակառակ անոր որ Պատրիարք Յօր պատճարաբանութիւնները գտան անհամոզիչ, թեքեցան Պատրիարք Յօր կողքին, որը կ'առաջարկէր Ապրիլեան նահատակաց հոգեհանգիստը կայացնել Երեքշաբթի՝ Ապրիլ 25ին:

Յ.Ս.Ը.Մ.ի, Յ.Օ.Ս.ի թէ Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ, նկատի առնելով որ վերջին 4 տարիներու ընթացքին երրորդ անգամն էր որ Ս. Աթոռը ոչ համոզիչ պատճառաբանութիւններ ու արգելքներ կը յառաջացնէր Ապրիլեան Ոգեկոչման նշումը փոխանցելու յաջորդ օրին, եւ նկատի առնելով որ Ապրիլ 24ը, անկախ հոգեհանգստեան պահէն, նաեւ քաղաքական քարոզչական պահանջատիրական խորք կը բովանդակէ եւ օտար մամուլի թէ հասարակութեան ուշադրութիւնը կեդրոնացուելու է նաեւ հոն ու աւելին հոն, վերոյիշեալ միութեանց վարչութիւնները որոշեցին դուրս գալ միացեալ յանձնախումբի կազմէն ու տանիլ անկախ բայց եւ պատշաճ աշխատանք օրուան նշման:

Հետեւաբար, Ապրիլ 24ի առաւօտեան աւելի քան 150 Հայեր, մեծամբ մասամբ Դաշնակցական գաղափարախօսական ճամբու համակիրներ,



*Հոգեհանգստեան պաշտոն Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ:*

Անրկայացան Երուսաղէմի Հայ Կաթողիկէ Ցաւաքին Սօր եկեղեցին, որուն Ապրիլեան Նահատակաց խորանի վերեւ հոգեհանգստեան պաշտօն մատուցեց շրջանի Հայ Կաթողիկէ Համայնքի նորանշանակ առաջնորդ Գերապայծառ Ռաֆայէլ Եպս. Մինասեան:

Մինասեան Սրբազանի ազգայնաշունչ քարոզէն թէ պահէն ոգելորուած, եկեղեցւոյ ամբողջ բազմաթիւնը օթօպիւսներու միջոցաւ ժամանեց Արեւելեան Երուսաղէմի թրքական դեսպանատունը ուր առաւել 100 Հայորդիներ կը սպասէին: Շուտով, հեռաւոր Հայֆայի, Եաֆայի թէ Բէթախ Թիքվայի շրջաններէն ժամանող Հայորդիները կազմեցին աւելի քան 300 հոգու պատկառելի ցոյց մը, որը ամբողջ ժամ մը իր ազգային երգերով թէ կոչերով անհանգստացուց դեսպանատան Թուրք պաշտօնէութիւնը հակառակ որ աւելի քան քառասուն, մինչեւ իրենց բերանները զինեալ, ոստիկաններ կ'ապահովէին դեսպանատունը թէ հանդիպակաց փողոցները:



*Օրուան առթիւ ցոյց թրքական դեսպանատան առաջ:*

Ցոյցի ակտիվները, ոստիկանության հետ համադրուած կարգադրութեամբ մը ցուցարար ամբոխին արտօնութիւն տրուեցաւ ուղղակի մօտենալու դէսպանատան գլխաւոր մուտքին նուազագոյնը նկարահանուելու համար:

Հակառակ խանդաւարութեան թէ աղմուկին, ցոյցը դուրս չեկաւ կարգից ի գարմանս ոստիկան պատասխանատուներուն, որոնք Լոյսի Օրուան Հայոց բարձրացուցած բողոքին մտահոգութիւնը կ'ապրէին անկասկած:

Այնուհետեւ, ցուցարարները նոյն օթօպիւսներուն բարձրանալով ժամը 12:30ին ժամանեցին Յոպէի Դուռ ապա մայրավանք ուր միախառնուելով հոն համեցող բազմութեան, աւելի քան 500 հոգու բացարաբար աշխարհականներէ բաղկացեալ թափօրը առաջնորդութեամբ Իսրայէլի մօտ Հայոց Պատուոյ Հիւպատոս Վսեմ. Տիար Յուլակ Մոմճեանի թէ մեծ Հայասեր Հրեայ երեսփոխան Եաիր Ցապանի ու հոգեշ. Աւետիս Վրդ. Իփրաճեանի թէ հայր Եորայր Գազազեանի ու Հ.Մ.Ը.Մ.ի սկաւառներու շարժուեցան առաջ դէպի Արարայի յուշարձան ուր խիստ տպաւորիչ ու խորհրդաւոր արարողութեամբ մը նշուեցաւ օրը, որու ընթացքին առիթ տրուեցաւ ծաղկեպսակներու գետեղումի ապա նոյն Հայասեր մարդասեր Եաիր Ցապանի թէ Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետի օրուան առթիւ խօսքերուն: Նոյն առթիւ նաեւ ասմունքեց Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Յարութ Պաղամեան ու երաժշտական երկու կտորներով, փողով թէ տուտուքով, ներկայացան եղբ. Ռուբէն Նալպանտեան եւ Պրն. Աշօտ Սահակեան:



*Արարայի Յուշարձանի առաջ ծաղկեպսակներու գետեղում:*

Յատկանշական էր յատկապէս Եաիր Ցապանի արտայայտութիւնը, որը կ'ըսէր "կը զգամ ամօթը անոր որ իմ պետութիւնը, որը ինքնին անմիջական ծնունդն էր ուրիշ ցեղասպանութեան մը տակաւին կը մերժէ Հայոց Ցեղասպանութեան փաստը մինչ մենք Հրեաներս պէտք է ըլլայինք դրօշակակիրները ու յառաջապահները Հայոց արդար բողոքին եւ ոչ թէ պահուրտինք մեր քաղաքական սին հաշիւներու ետին մինչ աշխարհը ամբողջ Հայոց կոչին կը զօրակցի բաց ճակատով":

Ժամը 2ին Հ.Մ.Ը.Մ.ի սրահին մէջ մեծարուեցաւ օրուան հոգեւորճը որմէ ետք օրուան ձեռքբերումներէն իրապէս թէ բաւարարուած եւ կարծես հոգեւին վերաշխուժացած հասարակութիւնը բաժնուեցաւ իրարմէ յաջորդ տարին աւելին նուաճելու բարձր տրամադրութեամբ:



*Հ.Մ.Ը.Մ-ի ակումբի հոգեւորժի պահուն:  
Նկարուած ձախէն աջ, Ընկիի. Ծօրճէր Աւագեան, Ընկ. Լեւոն Օհանեսեան,  
Շրջանիս Հայաստանի Պատուոյ Հիպատոս Տիար Յուլակ Մոմճեան, Մեծ Հայասէր  
Տիար Եսիր Յապան:*